ԶՎԱՐՃԱԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ)

Թալեսի մայրը Թալեսին հորդորում է ամուսնանալ: Թալեսը պատասխանում է, թե դեռ շուտ է: Տարիներ անց մայրը նույն պահանջով է դիմում: Այս անգամ ստանում է հետևյալ պատասխանը, թե արդեն ու՞շ է:

***

Մի անգամ Թալեսը տանից դուրս է գալիս աստղերը դիտելու: Ստացվում է այնպես, որ ինքնամոռաց երկնքին նայելով՝ ընկնում է մի խոր փոսի մեջ: Անհանգստացած կանչում է.

- Օգնեցե՞ք, օգնեցե՞ք:

Մայրը մոտենում է ու ասում.

- Է՜ Թալես, դու չես տեսնում ոտքերիդ տակը ու դեռ ցանկանում ես ճանաչել այն,ինչը երկնքու՞մ է:

***

Հույն փիլիսոփաներից մեկը ասում էր, թե կյանքի ու մահվան միջևտարբերություն չկա: Նրան հարցնում են, թե ինչու այդ դեպքում դու չես մեռնում: Նա պատասխանում է, թե հենց այն բանի համար, որ տարբերություն չկա:

***

Երբ Դիոգենեսը գերի է ընկնում և հանվում վաճառքի՝ գնորդի այն հարցերին, թե ինչ կարող է անել, պատասխանում է, թե կարող է մարդկանց վրա իշխել, և իր կողմից գնորդին հարցում է, թե չի ցանկանում արդյոք նա իր համար տեր գնել:

***

Աղբյուրից բաժակով ջուր խմող Դիոգենեսը տեսնելով, թե ինչպես մի պատանյակ կռացած անմիջապես աղբյուրի ակունքից է ջուր խմում, ասում է.

- Այս պատանին ինձ գերազանցեց:

***

Մի անգամ, երբ Դիոգենեսը արևի լոգանք է ընդունում, Ալեքսանդր Մակեդոնացին՝ մոտենալով նրան և կանգնելով գլխավերևում, ասում է.

- Ինչ ցանկանում ես խնդրիր ինձնից:
- Մի ծածկիր արևը,- հետևում է պատասխանը:

***

Մի երիտասարդի Սոկրատեսի տված այն հարցին, թե ինչ խորհուրդ կտա՝ ամուսնանալ, թե ոչ, իմաստասերը պատասխանում է, թե վարվիր ինչպես ցանկանում ես, միևնույն է երկու դեպքում էլ փոշմանելու ես:

Բաժինը վարում է փիլիսոփայության գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Սերգեյ Մանուկյանը: